մի ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Զալավարը. դա բանաստեղծական, պճնազարդ մի սար է, որի կատարը զարդարուած է թաւշեայ կանաչով. նրա շրջագիծն է 10 վերստ, իսկ խորութիւնը 1000 գեազ, որը լցուած է հարուստ և սառնորակ ջրով. ահա այստեղից ջուրն օձապտոյտ հոսելով ոռոգում է Շուրիշկանի դաշտավայրերը։

Բնակիչները, որ գաղթած են Հումուց, Քեաբուանդից, բաղկացած են 78 տնից 657 շնչով, որի 360-ը արական է, իսկ 297-ը իգական. նրանք պարապում են հողագործութեամբ և մասամբ էլ անասնապահութեամբ։

Հողը պատկանում է Միրզամատ Մէհդուլի խանին. գիւղացիները հողազուրկ են. նրանք մշակում են աղայի հողը և ստացուած արդիւնքի $^1/_3$ մասը տալիս են նրան. մօտաւորապէս տարեկան 160 խալվար ցորեն և գարի վճարում, բացի այդ 120 թուման էլ պետական հարկ են տալիս։ Հողը մեծ մասամբ ջրովի է, վարում են արօրով և ցանում նոյն հացաբոյսերը։

Գիւղն ունի մի եկեղեցի Ս. Բարսեղ անունով, բայց Շուրիշկանը Փէրիա գաւառում հռչակ է վայելում առանձնապէս իր հրաշագործ և ախտահալած աւետարանով. դա մի հազուագիւտ, ձեռագիր թղթեայ աւետարան է, որի ծաղկատառերի ու նկարների նրբութիւնը և գոյների ազնուութիւնը զարմանք է ազդում մարդուն։ Կազմի վրայ ունի արծաթեայ մի խաչ, որի չորս անկիւնը դրուած են չորս սրբերի մասունքները։ Այդ աւետարանը կրում է ՁԽԷ (747) թուականը։ Ըստ աւանդութեան, երբ պարսիկները գիւղը թալանում են, աւետարանն աղաւնու ձև է ստանում և պապի աղբիւրի մէջ ընկնում, ուր մնում է ուղիղ եօթը տարի առանց վնասելու. ապա գիւղացիները հանում են աղբիւրից և բերում գիւղ։ Իսկ մի ուրիշ աւանդութիւն ասում է. լուռերը ծրագրում են գիւղն աւարի տալ, ուստի նրանք զինուած ձիաւոր խմբով գիշերը յարձակւում են գիւղի վրայ, սակայն երբ մօտենում են գիւղին՝ նրանց առաջ ելնում է կարմիր-կանաչ զգեստներով սու-